ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ուրբաթ, հոկտեմբերի 14-ին ցերեկուայ ժամը 12-ին Ազգիս Վեհափառ Հայրապետը մեկնեց ս. Էջմիածնի կայարանը այնտեղից Ալէքսանդրապոլ գնալու համար. ուր մի քանի օր հանգստանալուց յետոյ Նորին ս. Օծութիւնը կուղևորուի ի Տփխիս։

Նորին Վեհափառութեանը բարի երթ մաղթելու համար. վեհարան էին հաւաքուել միաբանութիւնը, իսկ մինչի կայարան ուղեկցեցին դերապ. Յովհաննէս եպիսկ. Շիրակունին Տ. Գարեգին և Տ. Տաճատ վարդապետները և շնորհունակ Սմբատ սարկաւագը։

Վեհափառի հետ գնացին Ալէքսանդրապոլ գիւանապետ Տ. Յուսիկ վարդապետը և պ. Խորէն Խրիմեանը։

Նորին Վեհափառութիւն Ազգիս Հայրապետը հոկտեմբերի 27-ին բարեհաճեց իր դէպի Ալէքսանդրապոլ արած ճանապարհորդութիւնից ժամանել Մայր Աթոռ։ Նորին Սրբութեան ընդառաջ էին գնացել մինչի երկաթուղու կայարանը Գեր. Յովհաննէս եպիսկոպոսը և Տ. Տաճատ վարդապետը։

Իրենց պաշտօնատեղը մեկնեցին վիճակների գործերով Մայր Աթոռս եկած գեր. Անանիա արքեպիսկոպոսը և Տ. Մամբրէ ու Տ. Զաւէն վարդապետները։

Տփխիս գնաց մի ամսուայ արձակուրդով տպարանի Տեսուչ և Արարատի խմբագիր Տ. Եղիշէ Ծ. վարդապետը՝ բժշկուելու համար։

Նորին Վեհափառութիւնը Երևանի Փոխ.-թեմական նշանակեց Գեր. Յուսիկ եպիսկոպոս Մովսիսեանին, որը նոյեմբերի 8-ին ճանապարհուեց Երևան՝ իր պաշտօնատեղին։

Նախկին Փոխ-թեմական Տ. Կարապետ վարդապետը վերադառնալով Մայր Աթոռ, կարգուեց դասատու Գ. Ճեմարանի։

ՏԱՃԿԱՀԱՅՏ

Բիւզանդիոնի մէջ կարգում ենք՝ 15 սեպտեմբեր.

Ռումանուգի առաջնակարգ վաճառականներէն Սարգիս էֆ. Գույումճեան, որ ծանօթ է կրթական և բարեգործական նպատակներու համար ըրած ձեռնտուութիւններով, այս անգամ մանկապարտէզի և նախապատրաստական վարժարանի յատուկ շէնք մը շինել տուած է իր ծախքով, կրկնայարկ, 1,000 ոսկիով։ Այս շէնքին կառուցումն աւարտելու վրայ է և հոկտեմբերի մէջ պիտի կատարուի բացման հանդէսը։ Ս. Պատրիարքն օրհնութեան կոնդակ պիտի ղրկէ յիշեալ կրթասէր ազգայինին։

---

16 Սեպտեմբեր.

Երուսաղէմի վանքին հաշուեքննիչ Մասնախումբն երէկ նիստ գումարեց Ղալաթիոյ Խորհրդարանը. ներկայ էին վսեմ. Գրիգոր էֆ. Խտրեան, Առլանեան, Սէթեան, Սուրէնեան էֆէնտիք։ Ղեւոնդ վ. Մագսուտեան ևս ներկայ էր պահանջուած բացատրութիւններ տալու համար։

---

17 Սեպտեմբեր.

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը վանքին վերաբերեալ կալուածական խնդրոց վրայ տեղեկութիւններ հաղորդած է Ս. Պատ-